

Հաստատում եմ՝

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ

N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Տնօրեն՝----- Մ. Պ. Քուշկյան

<----->> 2023թ.

ԱՐՏԵՄ ՄԻԿՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ N 166 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

դասարան՝ VI^Է

դասղեկ՝ Ա. Գրիգորյան

2023-2024 ուստարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

5-րդ Ե դասարանում սովորում է 32 աշակերտ՝ 17 տղա և 15 աղջիկ: Դասարանի զարգացման մակարդակը կարելի է որակել միջինից բարձր, եմոցիոնալ մթնոլորտը չափազանց բարձր է: Դասարանում գերակշիռ մաս են կազմում աշխույժ, ակտիվ, բանիմաց աշակերտները, բայց կան նաև ծույլ, անփույթ և չարաձճի աշակերտներ: Նրանք ունեն տարիքին համապատասխան մտավոր ունակություններ: Ներառական ուսուցմանն ընդգրկված աշակերտ չկա: Դասարանի ավագը Սիմոնյան Արմինեն է:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնա-դաստիարակչական աշխատանքները կազմելիս առաջնային ենք համարում դասարանական կոլեկտիվի ձևավորումը, երեխաների մոտ ինքնուրույնության և նախաձեռնության զարգացումը, հոգևոր և բարոյական արժեքների գնահատումը, առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորումը, դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպումը

Անհրաժեշտ է կազմակերպել երեխաների ակտիվ ստեղծագործական գործունեությունը, պայմաններ ստեղծել նրանց ինքնահաստատման համար, դաստիարակության գործընթացն ուղղել երեխայի իրավունքների պաշտպանությանը, նպաստել նրանց ինտելեկտուալ և ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Այս ամենի համատեքստում առանձնացնենք որոշակի աշխատանքներ՝

- դասղեկի ժամերի անցկացում
- սովորողների հանրօգուտ աշխատանքի կազմակերպում
- վերահսկողություն սովորողների ուսման առաջադիմության և վարքի նկատմամբ
- ունենալ զրույցներ տարբեր թեմաներով
- աշակերտների, ծնողների և ուսուցիչների միջև ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում
- սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացում, կատարելագործում
- տոնական միջոցառումների կազմակերպում

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Հոգևոր դաստիարակությունը փոխանցում է մեծապես բարոյական արժեքներ: Այն շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման և մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այդ

նպատակով կարևոր ենք համարում աշակերտների մոտ սերմանել հարգանք քրիստոնեության նկատմամբ, բացատրել՝ ինչ նշանակություն ունի հավատը մեր կյանքում: Հատուկ անդրադարձ կկատարենք եկեղեցական տոներին և ծիսակատարություններին՝ պարզելով դրանց ակունքները և առանձնահատկությունները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Անցկացնել զրույցներ՝ ձևավորելով շրջապատի գեղարվեստական ընկալումը: Կազմակերպել այցելություններ մշակութային օջախներ: Աշակերտների մոտ զարգացնել գեղեցիկի ոլորտում դրսևորվելու կարողություններ: Նպատակային համարել մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորումը:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Անցկացնել հատուկ դասեր՝ նվիրված հայ ազատամարտի պանծալի էջերին: Դասարանում ստեղծել մշակութային միջանցք, որտեղ կզարգանա երեխայի մշակութային ընկալումը: Աշակերտների բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Ծանոթացնել մեր հին ու նոր հաղթանակների պատմությանը և նրանց սրտում սերմանել հայրենիքի՝ բարձրագույն արժեք լինելու գաղափարը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական առողջության զարգացման պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Ուշադրություն դարձնել նաև այն խմբակներին, որին երեխան հաճախում է: Հաշվի առնել նրա ֆիզիկական վիճակը: Այդ մասին զրուցել ծնողի հետ: Հետևել ֆիզիկական ակտիվությանը: Այս ամենը առաջին հերթին պետք է ուղղված լինի երեխայի ներդաշնակ անհատականության ձևավորմանը: Սովորեցնել ճիշտ օգտագործել մարմինը և առողջությունը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակության մեջ չափազանց կարևոր է աշխատանքի հանդեպ ճիշտ վերաբերմունք դրսևորելը, երեխաների պատասխանատվության զգացումի բարձրացումը: Խթանել երեխաների մեջ աշխատանքային պարտականությունների նկատմամբ դրական վերաբերմունք:

Շաբաթօրյակի, հերթապահության, ծառատունկի միջոցով երեխաների մեջ սերմանել աշխատանքային դաստիարակություն: Դասղեկի ժամերին խոսել դպրոցը, դասարանը մաքուր պահելու մասին:

3.6. Բնապահպանական դաստիարակություն

Բացատրել երեխաներին շրջակա միջավայրի պահպանության դերն ու նշանակությունը մեր կյանքում: Կազմակերպել զրույցներ երկրագնդի բնապահպանական խնդիրների մասին: Աշակերտների մտածողության մեջ ձևավորել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի և բնության հանդեպ: Դասարանի ծաղիկները ջրել, չփչացնել դպրոցի բակի ծառերը և ծաղիկները: Մայրենիի դասաժամերին նաև ունենալ քննարկում «Նամակ բնապահպանության նախարարին» վերնագրով, որտեղ երեխաները, իրենց մտահոգությունները ներկայացնելով բնապահպանության նախարարին, կկարողանան ևս մեկ անգամ վերհիշել իրենց պարտականությունները բնության նկատմամբ

4. Դպրոց-ընտանիք կապը

Զորավոր է այն ազգը, որը գորավոր ընտանիքներ ունի. երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը պետության կորիզն է, և լավագույն արդյունքի հասնելու համար պետք է միավորել դպրոցն ու ընտանիքը: Անհրաժեշտ ենք համարում ապահովել ծնող-երեխա, աշակերտ-ուսուցիչ հարաբերության համագործակցությունը: Այս կապը պահել անխարդախ, քանի որ այն իր մեջ ազդեցությունն է ունենում երեխայի վարքի, ինչպես նաև կրթության որակի հիման վրա:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

	<i>Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը</i>	<i>կատարման ժամկետը</i>	<i>կատարողներ</i>
I	Աշակերտների հաշվառում, դասագրքերի բաշխում, դասարանի կահավորում:	01.09-08.09	Դասղեկ, աշակերտներ
II	Հերթապահության սահմանում, դասղեկի ժամի ընտրություն:	11.09-15.09	Դասղեկ, աշակերտներ
III	Ծնողական ժողով: Ծնողխորհրդի կազմի ընտրություն:	18.09-22.09	Դասղեկ, աշակերտներ
IV	Զրույց՝ նվիրված 44-օրյա պատերազմին	25.09-29.09	Դասղեկ, աշակերտներ

V	Դասարանական ակտիվի աշխատանքի համակարգում:	02.10-06.10	Դասղեկ, աշակերտներ
VI	Քայլենք ժամանակի հետ	09.10-13.10	Դասղեկ, աշակերտներ
VII	Իմ սիրած մասնագիտությունը	16.10-20.10	Դասղեկ, աշակերտներ
VIII	Կարգապահական հարցերի կարգավորում	30.10.03.11	Դասղեկ, աշակերտներ
IX	Աշակերտների կարողությունների և հմտությունների բացահայտում	06.11-10.11	Դասղեկ, աշակերտներ
X	Աստծո տասը պատվիրանները	13.11-17.11	Դասղեկ, աշակերտներ
XI	Խնայենք մեր մոլորակի բարիքները	20.11-24.11	Դասղեկ, աշակերտներ
XII	Աշակերտների միջանձնային հարաբերությունների պարզում	27.11-01.12	Դասղեկ, աշակերտներ
XIII	Ինչպես պաշտպանվել արհավիրքներից	04.12-08.12	Դասղեկ, աշակերտներ
XIV	Գեղեցիկը մեր կյանքում	11.12-15.12	Դասղեկ, աշակերտներ
XV	I կիսամյակի արդյունքների ամփոփում	18.12-22.12	Դասղեկ, աշակերտներ
XVI	I կիսամյակի ուսումնական արդյունքների գնահատում , II կիսամյակում նախատեսվող ծրագրերի քննարկում	II կիսամյակ 08.01-12.01	Դասղեկ, աշակերտներ
XVII	Հարգենք և օգնենք մեծերին և փոքրերին	15.01-19.01	Դասղեկ, աշակերտներ
XVIII	Մեր բանակը երեկ, այսօր և վաղը	22.01-26.01	Դասղեկ, աշակերտներ
XIX	Իմ կյանքի ամենաերջանիկ պահը	29.01-02.02	Դասղեկ, աշակերտներ

XX	Հայ անվանի գիտնականները	05.02-09.02	Դաստեկ, աշակերտներ
XXI	Միրենք և պահպանենք բնությունը	12.02-16.02	Դաստեկ, աշակերտներ
XXII	Զրույց՝ «Մեր առողջությունը մեր ձեռքերում է»	19.02-23.02	Դաստեկ, աշակերտներ
XXIII	Գարունը մեր քաղաքում	26.02-01.03	Դաստեկ, աշակերտներ
XXIV	Մարտի 8-ը կանանց միջազգային օր	04.03-07.03	Դաստեկ, աշակերտներ
XXV	Իմ մայրիկը	11.03-15.03	Դաստեկ, աշակերտներ
XXVI	Ֆրանսախոսությանը նվիրված զրույց	18.03.22.03	Դաստեկ, աշակերտներ
XXVII	Մայրության ու գեղեցկության տոնին նվիրված զրույց	01.04-05.04	Դաստեկ, աշակերտներ
XXVIII	Ազատությունը իմ պատկերացմամբ	08.04-12.04	Դաստեկ, աշակերտներ
XXIX	Հայոց Մեծ Եղեռն	15.04-19.04	Դաստեկ, աշակերտներ
XXX	Հայրենասիրությունը մեր երկրի ապագան է	22.04-26.04	Դաստեկ, աշակերտներ
XXXI	Լավ սովորելու գաղտնիքը	29.04-03.05	Դաստեկ, աշակերտներ
XXXII	Ինչպես օգնել ընկերոջը	06.05-10.05	Դաստեկ, աշակերտներ
XXXIII	Հյուրասիրությունը մեր կենցաղում	13.05-17.05	Դաստեկ, աշակերտներ
XXXIV	Նոր տեխնոլոգիաները մեր կյանքում	20.05-24.05	Դաստեկ, աշակերտներ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ

համար	նախասիրական-առարկայական խմբակ	գեղարվեստական-երաժշտական խմբակներ	մարզական խմբակներ	այլ խմբակներ
1			բռնցքամարտ	
2				
3				
4	թատերական			Ինժեներական խմբ.
5				
6				
7				
8		պար		
9				
10				
11			ֆուտբոլ	
12			բասկետբոլ	
13				
14		պար		
15		պար		
16				
17				
18				
19	գրաֆիկ. դիզայն			
20		պար		

21				
22				նկարչություն
23				
24		պար		
25			ֆուտբոլ	
26				ծրագրավորում
27				ծրագրավորում
28			բնօրհանարտ	ռոբոտաշինություն
29		պար		
30				
31				
32			լող	

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

անցկացման օրը	դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, գրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
09	Զրույց նվիրված գիտելքի օրվան	
09	Օրվա ռեժիմի պահպանում	
09	Հայրենիք կերտողը ես եմ	
09	Խոնարհման դասեր՝ նվիրված 44 օրյա պատերազմին	
10	Իմ տրամադրությունը տանը և դպրոցում	
10	Գրքերի աշխարհում	
10	Իմ ուսուցիչը	
11	Էթիկայի կանոնները.տանը, դպրոցում	
11	Ի՞նչ է պատասխանատվությունը	
11	Մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում	
11	Իմ բացթողումները և ձեռքբերումները	
12	Կոնֆլիկտների հաղթահարման ուղիներ	
12	Ինչպե՞ս պաշտպանվել բնական աղետներից	
12	Պատիվ ունեմ լինելու Ա. միկոյանի հետնորդը	
12	Ամանորյա տոներին ընդառաջ	
	<i>II կիսամյակ</i>	
01	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում	
01	Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները	
01	«Հոգատարություն, ջերմություն, ազնվություն» քննարկում	
01	Հայրենիքի պաշտպանները երեկ, այսօր և վաղը	

02	Պարսավանքի և խրախուսանքի մեկնաբանում	
02	Առողջ ապրելակերպի սկզբունքները	
02	Տղաների և աղջիկների փոխհարաբերություններ	
02	«Մայրենիի օր»: Լեզուն մեր զենքն է, մեր ամուր պատմությունը:	
03	Բարեկիրթ վարվեցողության կանոնները	
03	Տեսանյութի դիտում «Համացանցում տարածված վատ և սխալ տեղեկատվություններ»	
03	Ֆիլմի ցուցադրում բարության, ընկերության մասին	
04	Արդյոք լավ գիտեմ իմ իրավունքներն ու պարտականությունները	
04	Զբոսանք «Բնության պահպանումը» թեմատիկայի շրջանակում	
04	«Ես հարգում եմ դիմացինի կարծիքը» քննարկում:	
04	Անանուն նամակ դասղեկին	
05	Ի՞նչ գրականություն եմ նախընտրում	
05	Ուժի, փառքի և անմահության մասին	
05	Ուսումնական կիսամյակի վերջին խոհեր	
05	Ուսումնական տարվա ամփոփում	

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

անցկացրած աշխատանքների ժամկետները	աշակերտների ազգանուն, անուն	դաստիարակչական աշխատանքների արդյունքները	կատարված դաստիարակչական աշխատանքների արդյունքները	լրացուցիչ տեղեկություններ

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

անցկացման օրը	քննարկվող հարցեր	ժողովի համառոտ բովանդակությունը	ծանոթություն

